#ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻՀԵՏ

Հրաշալի հնարավորություն 20-25 տարեկան ուսանողների համար համատեղելու տեսական և գործնական գիտելիքները՝ հետագայում մեր թիմը համալրելու հեռանկարով:

#ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻՀԵՏ

Ծրագրի տևողություն՝	2 ամիս
Ծրագրի անցկացման վայր՝	ք. Երևան
Ծրագրի մեկնարկ՝	Մարտի 1, 2019թ.
Հայտարարության սկիզբ՝	Հունվարի 29, 2019թ.
Հայտարարության ավարտ՝	Փետրվարի 3, 2019թ.

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Յուրաքանչյուր ուսանողի առաջնային մտահոգությունը աշխատաշուկայի պահանջներին բավարարող աշխատանքային փորձի ձեռքբերումն է: Փորձի կուտակումը պետք է սկսել դեռևս ուսումնառության ժամանակ:
IDBank-ի **#ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻՀԵՏ** ծրագրի շրջանակում ուսանողները հնարավորություն կունենան կիրառել իրենց գիտելիքները վաճառքի, սպասարկման ոլորտում, ինչպես նաև ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ բանկային գործում : **Ծրագրի ավարտին իրականացվելու է ատեստավորում, որի արդյունքներով լավագույն ուսանողները կշարունակեն իրենց կարիերան IDBank-ի հետ:**

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է՝

- լինել բակալավրի 4-րդ կամ մագիստրատուրայի 1-2-րդ կուրսի ուսանող,
- ունենալ լավ առաջադիմություն,
- ունենալ տնտեսագիտական/ֆինանսական մասնագիտացում,
- տիրապետել օտար լեզուներին /ռուսերեն, անգլերեն/,
- ունենալ հաղորդակցման գերազանց հմտություններ,
- և **ամենակարևորը՝** լինել նախաձեռնող, ստեղծագործական ու նորարար գաղափարներով և էնտուզիազմով լի ուսանող:

Եվ այսպես, եթե մոտիվացված ու նպատակասլաց ուսանող ես, համապատասխանում ես վերոնշյալ չափանիշներին և քեզ տեսնում ես այս ոլորտում, ապա օգտագործի՛ր հնարավորությունդ առաջին քայլն անելու՝ միանալով IDBank-ի թիմին:

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել ,ԱյԴի Բանկե-ի **դիմում-հայտը** և/կամ ինքնակենսագրականի (CV) հետ միասին ուղարկել hr@idbank.am հասցեին՝ նամակի թեմա (subject) դաշտում պարտադիր նշելով ծրագրի անվանումը՝ **,ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻՀԵՏե** :
Նշենք նաև, որ ստացված յուրաքանչյուր դիմում-հայտ մանրամասն կուսումնասիրվի ՄՌԿ վարչության կողմից, և հաշվի առնելով ուսանողի համապատասխանությունը Ծրագրի պահանջներին՝ ընտրված թեկնածուները կհրավիրվեն թեստավորման և հարցազրույցի:

կառուցիրկարիերադԱյԴիԲանկիհետ
#միացիրԱյԴիԲանկին
#արիԱյԴիԲանկ
#ԱյԴիԲանկթիմ